

յարգն: Հայ գրականութիւնը բնաւ պիտի չի տուէ, եթէ ողորմելի թերթերն խամրին, անհետանան ընդ միշտ: Բայց երբ կը տեսնէ օրէ օր խեղճ թերթերու բազմացումն և լաւերուն նուագումն, այդ մեծ հարուած մըն է, որ կը խախտէ Հայ գրականութեան կարեւոր շէնքը: Արտասահմանի մէջ «Նոր-կեանք», «Բանասէր», «Համայնարան», «Անահիտ» նոր հանգէսներ են, որոնց շնչասպառութեամբ հրատարակւին յայտնի նշան մըն է պարտ ու պատշաճ վարձատրութիւն մը չի գտնելին: Մանօթ գրագէտներ Յ. Շահնազար, Տ. Կոմսարական, Ս. Պարթեւեան, Ս. Գարբէկեան, Տ. Ս. Տիւսար, Տ. Սիպլի, և այլն որոնք սկսան Հայ լրագրութեան նոր և յառաջադիմական գոյն մը տալ, երկար չի տեւեց իրենց գործունէութիւնը, լքան, Հեռացան գրական ասպարէզէն, և քաջալերութեան և վարձատրութեան պակասն նախճիրներ գործեց:

Այն օրէն որ գրագէտ կոչուելու արժանաւոր գործիչ մը գրիչը ձեռք կ'առնու՝ Հայրենի գրականութեան զարգացման աշխատելու, սատարելու, մի և նոյն օրէն Պէշկիթաշլեանի անասուգութեան, այն զաղաւթարական ու տխուր ոգին՝ իր գրասեղանին առջև կը կանգնի, կը լիշեցընէ ապագային հոգն և մտատանջութիւնը, և այն է որ կը ջախջախէ կը լքանէ խեղճ գրական նահաւատկները, որոնք ազգին պակսին կ'արժանանան՝ երբ արիարար կը տուան նոյն ասպարէզին մէջ մինչեւ իրենց գեղեցիկ վերջալոյսին խաւարումն:

Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ

~~~~~

**ՄԱՍԻՍ** շաքանմաներն ազգային, գրական, քաղաքական եւ գիտական: Արտոնատէր՝ Կ. Ս. Իւմիւհեան: Խմբագիր — Տնօրէն՝ Տիգրան Արփիարտան: Տարեկան բաժանորդագլին 12 ֆրանք, թրղմատարի ճախը միասին:

Հասցէ՝ Կ. Պոլիս, Ղալաթիս, Նորատոռն-կեսն խան:



ԱՐՇԱԼՈՅՍ ԵՒ ԱՐԵԻԵԼԲ

ԼՈՒՍԱԿՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

(շար. տես էջ 401)

**Տ**ԱՐԻՆԵՐՈՎ կ'երեւի այս կուսանաց յայլ և այլ կողմանս Հայոց գեղերին և ցրուին. յարեւմտեան կողմ՝ թողլով զՄանի յԵփեղեաց գաւառի, ի Հիւսիսակողմ՝ զՆոնէ, որ կ'ըլլայ քարոզիչ Վրաց. այսպէս հարկ է որ ուրիշ կողմեր այլ թողուած ըլլան, և միայն իրենց կէսն միաբան գտուին իրենց նահատակութեան տեղում՝ ի կեդրոն Արարատայ: Միայն հարաւային Հայոց կողմերում կենալն և շրջին աւելի ծանօթ է. և թէ ոչ ուղղակի յԵփեղեայ եկած են Հօն՝ այլ յարեւմտեան Հայոց. կամ երկրորդ անգամ եկած են այս կողմս, ի գաւառն Բզնտանաց, ի ոսկմանս անուանի խոյս քաղաքի, ուր յետոյ իրենց կեցած տեղին՝ Ս. Գրիգոր վայելուչ եկեղեցեակ մի կանգնեց, և ըստ իր սովորութեան՝ խաչ մի շինեց, և տեղի այլ կոչուեցաւ Ս. Խաչ: — Աստի՛ վանայ ծովուն արեւմտեան եզրքը պատելով՝ եկան կեցանի թոռիս, ինչուան Հիմայ ծանօթ տեղ. — աստի՛ գէւ յարեւմտեան հարաւ կու գան՝ ի գաւառն Սոկաց, և կենան ատեն մի այն տեղ՝ ուր յետոյ Ս. Գրիգոր վանք մի հաստատեց, որ նոյնպէս Ս. Խաչ Մոկաց կոչուի, և անուանի ուխտատեղի մի ըլլայ ի ԺԺԱ դարս, և Գր. Նարեկացւոյ ատեն պայծառ շինութեամբ զարդարեալ և հռչակեալ: Թէ այս տեղ և թէ քիչ մ'այլ հեռու՝ Կճառ կամ Կրճատ կոչուած տեղ մի՛ շատ նեղութիւն և հալածանք կրեն կուսանքն, քրմաց և զանոնք զրդող դիւաց ազգամբ. բայց Գայիանէ իր խաչովն և իրեն Հեո Հոգեղ քահանայքն՝ Դանիէլ և Եսայի, աղօթիւք և օրհնութեամբ՝ հալածանք զանոնք. որք արգել կ'ըլլային մեր

սուրբ ուղեւորաց ձիերուն կամ ճամբուն. և « զայրագնեալ դիւացն՝ դիմեալ ի վերայ՝ « խեղէին, ծռէին, պնչատէին զպաշտօնեայս « իւրեանց. որ և անդ ասաքելայնորո՞ն քահա- « նայն Հաւածեալ զնոսա և քանդեալ զպաշ- « տամունս նոցա, բռնէին զխեղեալսն. վասն՝ « որոյ տեղին կոչեցաւ Էջմաշ և կրճատ, թէ՛ « ի յայսմ տեղով իմատեիին կամ կրճատեիին « գեւքն զմարդիկն. յորում տեղով Ս. « Պայրիանէ թողու զխաչն իւր՝ Խորեանս դի- « ւացն, որ էր Աւագակին (Քրիստոսի Հետ « խաչաւորին)։ որ և զտեղին յետոյ Հաստա- « տէ վասն Ս. ն Քրիզոր» : — Այս դէպքս մեծ Համբաւ Հանէ. որոյ Համար կուսանքն քաղաքակ կերպով զիրենք Կորդուաց խորու- ուրտոնքն մէջ ձգեն, և անցնելով Սո- ղոսի լեռնէն՝ կու գան ի կողմ մի, որ ըստ տպագրի պատմութեանս գրուած է Բերկրաց- անց գաւառ. այլ ծանօթն Բերկրի՝ Արբերանի գաւառին մէջ է, Վասնայ ծովուն արեւելեան կողմը. իսկ լաւագոյն օրինակի մէջ գրուի Բագրացոց գաւառ. և Հիմայ այլ ծանօթ է այս՞ Սողոմի կոչուած լեռնի մօտերը Պիրքե կոչուած տեղն : Սողոմին այլ ծանօթ է յաշ- խարհագրաց, Սողոմիս կոչմամբ, և ի տեղա- ցեաց Հիմայ այլ՝ Սոջիվա : Ասոր մօտ կու- սանքն խրճիթներ շինելով՝ պահ մի բնակին : Սողոմին կամ Թմիսէն կու գան՝ այն Կորդուաց և իր սահմանակից Տմորիաց գա- ւառին միջեւ, յԱլիկէ կամ Ալիկա կոչուած աւանն, յանուն կնոջ մի Սմատայա Այրա- քաշ կոչուած սպարապետին Արտաշեսի Բի, ի վիպասանիցն Հայոց, որք անշուշտ շատ առասպելներ Հիւսած էին այս քաջին և իր այդ սիրած Ալիկա՞ ասորի կնոջ վրայօք, ու-

րոյ անուամբ կոչեց իր ձեռակերտն, որ հա- սարակօրէն կոչուէր Աւան Սմատայա : Այս կողմերս (Տմորեաց) այն ատեն այլ կան եղեր « ընկզուտ ծառաւէտ տեղիք » . ուր գետոյն վրայ ձգուած կամըրջին մօտ՝ ատեն մի բնա- կին կուսանքն : — Անկէց կ'անցնին Մշկեց կամ Մշկոռնեաց լեռան խորին խորը մի, որ այսպէս կոչուի՝ լեռան վրայ արածող մշկա- պոքոտ այծեանց Համար, որ մեր երկրին յա- տուկ կենդանական բերք մի է. իսկ տեղա- գրօրէն՝ այս կողմս այն ատեն կամ պատմչին գրած ատեն՝ Հայաստան գաւառ կոչուի եղեր, նշանաւոր անուամբ. որ՝ Հայկայ և իր Կադ- մոս որդւոց աւանդութեանց վերացընէ տանի մեր միտքը : Այս տեղ գտան կուսանքն շատ բորտներն, որ ըստ Հեթանոսական անգը- թութեան՝ Հասարակաց բնական գեղերէն վուտէին, և Սուրբն իրենց աղօթիւք և քահանայիցն օրհնութեամբ բռնեցին. և թէ՛ ապագայից Համար այլ բռնկարար աղբիւր մի բղխեցին, և թէ իրենց պառաւ ընկերաց Համար, որ չուրցցին աւելի առաջ երթալ, և բնակեցան Հօն մինչեւ իրենց մահը : Իսկ զօրաւորքն եկան Բզնունեաց<sup>3</sup> (Վանայ) ծո- վուն եղերքը, յետոյ Ս. Թեոդորոս կու- չուած տեղ մի : — Աստից այլ դարձեալ դէպ ի Հարաւակողմն, Տեղիսի ծածանդակ գետոյ մի եղերք, որ Էրանգար և Աքառաւ քար կոչուած լեռանց միջեւ անցնելով, Թափի ի մեծ գետն : Այս տեղ աւելի երկարատեան կեցան կուսանքն, անոր Համար տեղն այլ կոչուեցաւ Ս. Տիկին : — Աստի կու գան իրենց մէկ նպատակեալ տեղն, ի Վանս Հո- գեաց, ուր էր « Պատկեր Տերամորն, որում « երկրպագեցին՝ ուրախացեալք, և տային

1. Այս տեղ մեր պատմիչն յիշէ աւանդու- թիւն մի, թէ երբ ջրհեղեղին տապանն կու- Հասնի այս լեռանս, նոյ կանչէ. « Ո՛ր Սողոմի թէ՛ Սոջոքաւունքն դիպեցաւ նախս » . նոյն իւրը կամ մէկ մօտն այլ Սարապետ կոչեն, և անոր ստոր- ոտին եղած շէն կամ քաղաք մի՞ Թմիսի կամ Թմիսի կամ Թմիսի, որ նշանակէ ութ իբր թէ, « յայսմ տեղուղ ութ ոգիք ելին ի տապանէն » : Այս 1600 տարուան աւանդութիւնն այլ զեռ- լտուի այս կողմերում, և Թմիսի՞ն՝ փոխանակ ութի՞ ոմանք 40 կ'ըսեն. տեղն այլ Տեղիսի գե-

տոյ Եւր և Պոհրան ծածանդակաց միջոց է : Մեր խոհական պատմիչն՝ այս առթիւս այլ մտերմա- բար խորհըրդածէ. « Այսօրեկ՝ թէ արդարեւ կամ « սուտք՝ ինչ ոչ է փոյթ. բայց միայն զի հա- « ճեցուցեց զմանկագունի դո՞ մտացը գտար- « փանս. վասն այսորիկ զրեմ քեզ զեման ի « զիրո յայս » : Յայս է որ երկտասարդ իշխա- նի մի զրէր Խորենացի, ըլլան Սմատաքն Բա- զրատունի և Արծրունի, ըլլայ ուրիշ մէկն : 2. Կոչուած է և Ուլիկ : 3. Ոմանք զրէն Բժունեաց :

« գոհութիւն Սրբուհւոյն » . բայց իրենց փա-  
փազին համեմատ չկարցան երկար ատեն  
կենալ հօս . որովհետեւ տեղւոյն քրիստո-  
նեայքն՝ որ գաղտուկ կ'ապրէին, վախնալով  
յայտնուելու՝ բռնադատեցին զՍ . կուսանն  
չուշանալ իրենց քով . — կամայ ականայ  
ստիպուեցան սոքա վերջին երկրապագութիւն  
մ'այլ ընելով իրենց ամենատիրելի Տիրամօր՝  
երթալ ելնել ուրիշ մօտաւոր դժուարակոխ  
լերան մի գլուխ, Պաշտ կամ Պաշտոյոյ  
կոչուած (և սխալմամբ Պաշտ գրուած և  
սպուած) . ուր՝ կ'ըսուէր թէ՛ շատ մեծ բազ-  
մութիւն գիւաց կայ, երկու բազնաց կամ  
կուստանց մէջ և շուրջ, Արամեացայ և Աստղ-  
կան, Հայոց գլխաւոր դից և դիցուհւոյ . և  
այնքան խառնխրուած աղաղակ և շփոթ կ'ըլ-  
լար (անշուշտ քրմաց խարդախութեամբ) ,  
որ մարդիկ իրարու խօսք չէին հասկընար, և  
անէկ սովորութիւն կամ առակ եղած էր ըսել  
(և կ'ըսուէր մինչեւ ի ժամանակ պատմելին),  
թէ « Թուխ ի Պաշտոյ գիւացն գալ՝ գլուխ  
« անլուր և անիմայ » : Այս լեռնէն խորածոր  
մի ինչելով դէպ յարեւելեան հարան՝ ուրիշ  
լերան մի վրայ գտան մեծ կրօնականաց կամ  
« տռն կրօնի անյազ հրոյ, անյապար այր-  
« ման աստուածոցն . և զմոխիրն՝ աստուա-  
« ծացուցեալ գոլով ի անա ջարիկն՝ հոսէին  
« յակն յորդարուղի աղբերն՝ որ ըլլէ յոտս  
« լերանցն, որ է յառաջ Խորալիմիկն, որ  
« տեղին Քոթ լսի, քանզի անուն քրմապե-  
« տին Վութ կարդայր . և զի ասէին զկրակն՝  
« քոյր, և զաղբիւրն՝ եղբայր . յերկիր ոչ ար-  
« կանէին զմոխիրն, այլ արտառուօք եղբորն  
« (Նրով աղբերն) ջնջէին : Եւ յայրս քարին  
« օրջացեալ կային վիշապք երկու՝ դիւացեալք  
« և սեւացեալք, որոց՝ աղջիկ կոյս և պատա-  
« նիս անմեղազոհէին . յայնստիկ ուրախացեալ  
« դեւքն՝ զուարճանային արեամբն և բազ-  
« նօքն, հրովն և աղբերքն, ահագին իմն տե-  
« սիւս և փայլիւն, ձայնս և թնգմունս և  
« կայթմունս գործէին . և ի մէջ խորածորոցն  
« օձք և կարիճք լի թունօք մահաբերին լցեալ  
« էր » : Այս ամեն զարհուրելի և քստմնելի  
սնոտիքը՝ Ս . կուսանքն իրենց լացով, աղօթ-

քով և խաչին նշանով՝ ու քահանայիցն օրհ-  
նութեամբ փշրեցին փճացուցին, և դեւերը  
կամ դիւապաշտներն այնպէս հալածեցին,  
որ՝ « Նման սաստիկ հողմոյ ի լեռնէն ի  
« լեռուն փչելով փախչէին, (և) ոչ այլ ինչ  
« լսիւր՝ բայց վաշ դժայիւ ճիչեալ » : Մինչեւ  
ցայսօր, կ'ըսէ պատմիչն, այն խորածորան  
մէջ « օձք մարմնեղէնք քարացեալ երեւին ի  
« վերայ բազնացն » : Բարդաւոր եղան այդ  
դժնդակ տեղոյ մօտիկ գիւղի բնակիչքն,  
որք տեսնելով տեղւոյն սքանչելի փոփոխու-  
թիւնը՝ հաւատացին ի Քրիստոս և մկրտուե-  
ցան ի քահանայից՝ ընկերաց կուսանաց :  
Կ'աւելցընէ պատմիչն . թէ, « Եւ ոչ զընդ-  
« դիմացաւ նոցա . քանզի տեղիս այս գոլով  
« Անակայ՝ հօր Պրիգորի, ի լսել գրթ մահու  
« Անակայ և Խորովու՝ անցեալ գնացին  
« փախստականք, և ոչ գոյր նոցա դիմա-  
« մարտ » : Այսինքն, Անակայ մարդիկն՝ տեղ-  
ւոյն տեարքն՝ փախան գնացին, և հօն մնացին  
բնիկ ռամիկ գեղացիքն, որոց դէմ կեցող  
արգիլող մի չկար հիմայ, և անվախ քրիս-  
տոնեայ եղան, չնորձօք կուսանացն :

Իսկ ասոնք այն լեռնէն վար իջան դէպ ի  
հիւսիսակողմն, և եկան ի կողքի գիւղ, ուր  
նոյնպէս կոչոց, օձիք և իրոց պաշտամունք  
կային, և նոյնպէս այլ ջնջեցին, աղբիւրն այլ  
ցամքեցուցին . որոց վրայ յետոյ Լուսաւորիչն  
երկու եկեղեցի շինեց, խաչ կանգնեց, և  
յիշատակ թողուց անունց՝ իր գօտին և գա-  
ւազանը : — Աստի ելան կուսանքն մտան ի  
Տոսք՝ գաւառ կանայ, և ասոր լերան հա-  
րաւակողմը խաչ կանգնելով՝ շինեցին և բնա-  
կեցան, տեղն այլ Ս . Խաչ անուանելով . բայց  
լսելով որ իմացուեր է իրենց ով ըլլալը և  
փնտռուիլը, թողուցին ելան ի Վարազ լեռ .  
ուր գետնափոր խորչեր շինելով պահուած-  
ցան, և երկար ժամանակ ընակեցան, և ու-  
մանք միշտ հօն մնացին, նոյնպէս և երկու  
քահանայք այլ . որք ամեն ուրբաթ սր այն  
քարայրից և խորոց մէջ պատարագ մատու-  
ցանելով՝ տեղն այլ յետոյ Ոչրաք-այրք կո-  
չուեցաւ . այս տեղ՝ միայն հաց և ջուր հա-  
շակելով ճգնեցան մինչեւ իրենց երկանիկ  
մահը : Իսկ միարան գունդ կուսանացն՝ որոց  
թիւ՝ աստ անչ ցրուելուն պատճառաւ կէսին  
հասեր էր, նորէն իրենց խորչերէն դուրս

եկան՝ յառաջ երթալու. բայց թէ ինչ ճամբով և ուր և ուր դադրելով՝ ի վարագայ մինչև ի վաղարշապատ մայրաքաղաքն, մեր պատմիչն կ'ըսէ. « Անտի գերթալն ի մար-  
« տիրոսական տեղիոն՝ յաղապս որոյ մեզ  
« փրկութեան ճանապարհ, ուսցիս համառօտ  
« յԱլլաթանգեղոսէ » : Ագաթանգեղոս կու-  
սանաց ճամբորդութիւնները չի պատմեր. այլ  
մէկ շունչով կամ գրչով Հռովմէն հասցընէ  
« ի վաղարշապատ, ի նիստ թագաւորացն  
« Հայոց. այնուհետեւ մտանէին ի Հնձնա-  
« յարկս այգեստանւոյն, որ կան շինեալ ի  
« հիւսիսոյ յարեւելից կուսէ. և կերակրէին  
« ընչիւք իւրեանց՝ ի վաճառաց քաղաքին. և  
« ոչ այլ ինչ գոյր թոշակ ընդ նոսա գոր ու-  
« նէին. բայց մի ոմն ի նոցանէ ունէր ա-  
« րուեստ ապակագործաբեան, առնել ոչոյնս  
« ապակեղէնս, և տալ գինս ընդ կերակրոյ՝  
« աւուրն պարենի ոռնիկ » :

Գաղղիքն մեկը այլ Հօս այս Ս. Կոռու-  
նաց երկար ճանապարհագրութիւնն, որ թեր-  
եւս ընթերցողին այլ երկար և աւելորդ թուի.  
բայց, ոչ միայն դիտնորէն հետաքննական  
է դա, այլ և մեր էական խնդրոյն համար  
կարեւոր, ինչուան Գ դարու վերջերը քրիս-  
տոնէութեան հետեւեր յայտնելով ի Հայս,  
իբրեւ վերջին նշողք Արշալուսոյ՝ յառաջ  
քան զելս համատարած լուսաւորիչ արեգա-  
կանն :

Ասկէ այլ աւելի՝ դարմանք մի ի դարմանա-  
լիս՝ ցուցընէ Նախախնամութիւնն Աստուծոյ,  
այնքան երկար ճամբաներով՝ յԵւրոպիոյ,  
յԱֆրիկէն (յԱղքեսանդրիոյ) և յայլեւայլ  
աշխարհաց Ասիոյ՝ առաջնորդել բերել յայլա-  
զան այլակրօն ազգաց միջեւ, երբեմն շիտակ  
և երբեմն խոտորկոտուր ճամբաներով՝ քանի  
մի տասնեակ պառաւ և օրիորդ կուսանաց,  
հանգերձ իրենց հոգեւոր պաշտօնիւք. տեղ  
տեղ ցրուելով և թողլով անոնցմէ, և զբաղ-  
մութիւնն՝ առանց հեթանոսաց զգուսնաց և  
հալածանաց մատնելու՝ հասցընել՝ ուր որ  
սահմաններ էր իրենց, փութաւոր և անմահ յի-  
շատակաց արժանի վկայութեամբ : Դարձեալ,  
զարմանք մ'այլ, նման սպանողի որդի Գրի-  
գորին՝ առ որդի սպանելոյն բերել յարեւն,  
առ նոյն թագաւորն Հայոց՝ փնտռող կուսա-  
նացն՝ զորդամար կայսերն, բերելն ինչուան

արքունեաց ագարակին մէջ դադրեցընել,  
զԱյն, որոյ վրայ՝ իբրեւ

« ի վերայ միոյ պատուական մարդարտի՝  
Խաղացին ցընծալով՝ ամենայն հեթանոսք.  
Արեւելք, յԱրեւմուտս ընթացեալ հասնի,  
Քարոզել յայտնապէս ըզջնող տեսու-  
թիւնն :

Լուան թագաւորք և լըցան խնդութեամբ.  
Որսալ յանձն առին ըզգաղտնի մեծու-  
թիւնն.

Պարգեւել իրերաց խոտտնային բանւիք,  
Եւ ծածուկ հնարիւք՝ գողնալ ի մի-  
մեանց » :

Եթէ ոտակ քաղաքական դէպք մի ըլլար  
այս կուսանաց ուղալիսի ճամբորդութիւն մի,  
արժան էր կանգ առնուլ և քննել զարմաց-  
մամբ. իսկ երբ այդ դժուարակոխ խորտու-  
րորտ ճամբուն ծայրն՝ կու հասնի ի բարձրու-  
թիւնս երկնից և յարճալութիւն Ատուծոյ,  
չարժէր այդ կուսանաց արեւամբ գնուած ան-  
ձին համարուելով իսկ Հետեւիչն՝ անոնց արիւ-  
նտամ և պատշտած փափուկ ոտից կրնգին :  
— Կնքեմք այս տեղ և մեկը մեր եկեղեցւոյ  
Արշալուսոյն պատմութիւնը, եթէ չնքեմ կա-  
րող՝ ոչ այն կուսաւորն ճամբաներն և ոչ կո-  
խող զարապարները պահնելով՝ համարուել  
անոնց իւրս անգամ համարուած և համարու-  
րելով՝ զօրացած՝ Խալը. և դառնանք քիչ մ'այլ  
աւելի մօտէն նկատել Հայոց ազգիս հրաշա-  
լի քրիտոնէական լուսաւորութեան երրորդ  
միջնորդը. Հսկփսիւհէն :

Շաքարայտիկի Հ. Գ. Կ. Ս. Ա. Ի. Ե. Ան



## Հ Ա Ն Ք

ԵՒ ԻՐԵՆԵՑ ՍՏՈՒԳՈՐԱՆՈՒԹԻՒՆՆ

(Շար. տիւ էջ 108)

Կայծքար

Մ եր հին բարդ բառերէն է. և ասոր  
հոմանիշ են Գալախագ, Ալուէսաքար. Կոչի  
նաեւ Խիստ քար և Կաճքար : Ոմն յտ. բառն